Դատական Գործ N: ԵԱՔԴ/3185/02/09

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	14-12-2009
Հայցվոր/դիմող	
Անուն:	Սրթի Թու Փրոդաքշեն ՍՊԸ
Հասցե:	Արաբկիր 41 փողոց, 31շ., բն. 20
Պատասխանող	
Անուն:	Շանթ ՍՊԸ
Հասցե:	Կիեւյան 16
Քաղաքացիական գործի ստացման կարգը:	Առաջին անգամ
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	Հեղինակային բացառիկ գույքային իրավունքի պաշտպանության վերաբերյալ
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	5.3
Պետական տուրք:	8000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը:	
Հակընդդեմ պահանջ:	
Պետական տուրք:	

Ամսաթիվ:	14-12-2009
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Արաբկիր Քանաքեռ-Զեյթուն
Դատավորի անուն:	Սարիբեկ Վարդևանի Արամյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Արաբկիր Քանաքեռ-Զեյթուն
Դատավորի անուն:	Սարիբեկ Վարդևանի Արամյան

Որոշման ամսաթիվ:	16-12-2009

Ներկայացվել է միջնորդություն:	Ապահովում կիրառելու
Բավ/մերժ:	Բավարարվել է

Որոշման ամսաթիվ:	16-12-2009
Տրվել է կատարողական թերթ:	16-12-2009
Հայցի ապահովման միջոցները:	Գույքի դրամական միջոցների վրա արգելանք դնելը
Այլ նշումներ:	

Դատաքննության ամսաթիվ:	27-01-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	18-12-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	16:00
Նիստերի դահլիճի համար:	6

Դատաքննության ամսաթիվ:	17-02-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	27-01-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համար:	6

Դատաքննության ամսաթիվ:	19-02-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	17-02-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	16:00
Նիստերի դահլիճի համար:	6

Երբ:	19-02-2010
Հիմքը:	Կանխակալ վերաբերմունք
Ինքնաբացարկի նախաձեռնողը:	Կողմի միջնորդություն
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	19-02-2010

Դատաքննության ամսաթիվ:	19-02-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	19-02-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	16:00
Նիստերի դահլիճի համար:	6

Հայցի լուծման ամսաթիվ:	05-03-2010
Հայցի լուծումը:	Բավարարվել է մասնակի
Հոդված	
Հոդված	ՀՀ քաղ. դատ. օր.ի 130-131 հոդվածներով
Հակընդդեմ հայցի լուծումը :	
Հակընդդեմ հայցի լուծման	

ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
Դատական ակտ (վճիռ, որոշում):	Գործ համար ԵԱՔԴ 3185/02/09 ՎՃԻՌ Հանուն Հայաստանի Հանրապետության 05.03.2010թ. դատարանի թիվ 6 դահլիճում Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը նախագահությամբ դատավոր՝ Ս. Արամյանի քարտուղարությամբ՝ Մ. Սամսոնյանի մասնակցությամբ՝ հայցվորի ներկայացուցիչ՝ Ա. Անտոնյանի պատասխանողի ներկայացուցիչներ՝ Ա. Կարախանյանի Մ. Ղուլյանի դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊ ընկերության ընդդեմ «Շանթ» ՍՊ ընկերության Երևանի մասնաճյուղի՝ գումարի բռնագանձման, հեղինակային բացառիկ գույքային իրավունքի պաշտպանության, «32 ԱՏԱՄ» հումորային հեռուստահաղորդում» տեսալսողական ստեղծագործության տեսանյութերը այնպիսի կրիչի միջոցով, որպիսի կրիչի օգտագործմամբ դրանք ստեղծվել են, հայցվորին վերադարձնելու և նկարահանված հաղորդման տեսանյութերը առանց հայցվորի թույլտվության հեռուստատեսությամբ ցուցադրելը պատասխանողին արգելելու պահանջների մասին. ՊԱՐԶԵՑ I 1. Դատավարական նախապատմությունը Հայցադիմումը մուտք է եղել դատարան 2009թ.-ի դեկտեմբերի 14-ին և այն վարույթ է ընդունվել 16.12.2009թ.-ին: «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊ ընկերությունը դիմելով դատարան, խնդրել է պատասխանող «Շանթ» ՍՊ ընկերության Երևանի մասնաճյուղից առգրավվել և իրեն հանձնել պայմանագրով իր և պատասխանողի համագործակցության արդյունքում ստեղծված «32 ԱՏԱՄ» հումորային հեռուստահաղորդում» տեսալսողական ստեղծագործության տեսանյութերը՝ այնպիսի կրիչի միջոցով, որպիսի կրիչի օգտագործմամբ դրանք ստեղծվել են, ինչպես նաև պատասխանողին արգելել հեռուստատեսությամբ ցուցադրել իր և պատասխանողի համագործակցության արդյունքում ստեղծված «32 ԱՏԱՄ» հումորային հեռուստահաղորդում տեսալսողական ստեղծագործության տեսանյութերը: 27.01.2010թ.-ին՝ դատական նիստի ժամանակ, հայցվորի ներկայացուցիչ Դ. Հունանյանը դիմում է ներկայացրել դատարան, որով փոխելով հայցի առարկան, խնդրել է պատասխանող «Շանթ» ՍՊ ընկերության Երևանի մասնաճյուղից առգրավվել և իր վստահորդին հանձնել պայմանագրով իր վստահորդի և պատասխանողի համագործակցության արդյունքում ստեղծված «32 ԱՏԱՄ» հումորային հեռուստահաղորդում» տեսալսողական ստեղծագործության տեսանյութերը՝ այնպիսի կրիչի միջոցով, որպիսի կրիչի օգտագործմամբ դրանք ստեղծվել են, պատասխանողին արգելել առանց հայցվորի թույլտվության հեռուստատեսությամբ ցուցադրել իր վստահորդի և պատասխանողի համագործակցության արդյունքում ստեղծված «32 ԱՏԱՄ»

հումորային հեռուստահաղորդում տեսալսողական ստեղծագործության տեսանյութերը, ինչպես նաև պատասխանողից հօգուտ իր վստահորդի բռնագանձել 2720000 դրամ, որից 2120000 դրամը՝ բաց թողնված օգուտը և 600000 դրամը՝ իրավաբանական ծախսը:
Սույն գործը չի նախապատրաստվել դատաքննության՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222 գլխի կանոններով:
Գործում չեն ներգրավվել երրորդ անձինք:
19.02.2010թ.-ին կայացած դատական նիստի ժամանակ պատասխանողի կողմից ներկայացված 18.01.2010թ.-ի հայցադիմումի պատասխանը, որպես հայցվոր կողմի ապացույց, հանվել է ապացույցների ցանկից՝ նկատի ունենալով, որ այն սույն գործի հետ որևէ առնչություն չունի, քանի որ վերաբերվում է «Երեսուներկու Փրոդաքշն» ՍՊԸ-ի հայցադիմումին ընդդեմ «Շանթ» ՍՊԸ-ի Երևանի մասնաճյուղի, որով արդեն իսկ 09.02.2010թ.-ին կայացվել է դատական ակտ:

2. Հայցվորի դիրքորոշումը
Հայցվորի ներկայացուցիչ Ա. Անտոնյանը պնդելով հայցը, դատարանին հայտնել է, որ 06.10.2008թ.-ին «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊԸ-ի և «Շանթ» ՍՊԸ-ի Երևանի մասնաճյուղի միջև կնքվել է «32 ատամ» հումորային հաղորդման պատրաստման և հեռարձակման» մասին պայմանագիր: Նշված պայմանագրի համաձայն՝ կատարողը պատրաստում է, իսկ պատվիրատուն նկարահանում և «Շանթ» հեռուստաընկերությամբ եթեր է հեռարձակում «32 ԱՏԱՄ» հումորային հեռուստահաղորդումը շաբաթական պարբերականությամբ՝ դրա դիմաց կատարողին վճարելով՝ պայմանագրի 2.1 կետում նշված գումարի չափով:
Պայմանագրի 3.1.2. կետի համաձայն՝ պատվիրատուն (պատասխանողը) պարտավոր էր պայմանագրի գործողության ընթացքում յուրաքանչյուր շաբաթ «Շանթ» հեռուստաալիքով 3 անգամ եթեր հեռարձակել «32 ԱՏԱՄ» հաղորդումը՝ 1 հիմնական և 2 կրկնություն:
Պայմանագրի 8.3 կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտել ստորագրման պահից և գործել մինչև 2009թ.-ի հուլիսի 31-ը:
Պայմանագրի գործողության ընթացքում հայցվորը կատարել է պայմանագրի 1.1 կետով նախատեսված իր պարտականությունը, այսինքն պատրաստել է «32 ԱՏԱՄ» հումորային հեռուստահաղորդումը, իսկ պատասխանողն իր հերթին կատարել է իր պարտականությունը, այսինքն՝ նկարահանել և «Շանթ» հեռուստաընկերությամբ եթեր է հեռարձակել «32 ԱՏԱՄ» հումորային հեռուստահաղորդումը շաբաթական պարբերականությամբ:
Պայմանագրի 4.2. կետի համաձայն՝ պայմանագրի շրջանակներում պատրաստված հաղորդումների հեղինակային բոլոր իրավունքները, բացառությամբ հեռուստատեսային ցուցադրման իրավունքի, պայմանագրի գործողության ընթացքում և դրանից հետո պատկանում են կատարողին (հայցվորին):
Ինչ վերաբերում է հաղորդման հեռուստատեսային ցուցադրման իրավունքին, ապա այն տրամադրվել է պատասխանողին բացառիկ պայմաններով՝ բացառապես պայմանագրի գործողության ընթացքում: Հետևաբար պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո պատասխանողն այլևս հաղորդման հեռուստատեսային ցուցադրման իրավունք չունի, որը վերստին պատկանում է իր վստահորդին:
Նույն պայմանագրի 4.1. կետի համաձայն՝ պայմանագրի շրջանակներում պատրաստված հաղորդումների հեռուստատեսային ցուցադրումը կարող է իրականացվել բացառապես պայմանագրի գործողության ժամկետներում, բացառապես պատվիրատուի կողմից և բացառապես «Շանթ» հեռուստաալիքով:

	2009թ.-ի դեկտեմբեր ամսվա ընթացքում պատասխանողը խախտել է իր վստահորդի բացառիկ հեղինակային գույքային իրավունքը և իրագործել պայմանագրի գործողության ընթացքում իր վստահորդի և պատասխանողի համագործակցության ընթացքում ստեղծված հաղորդման մասերի հեռուստատեսային ցուցադրություն: 21.01.2010թ.-ին իր վստահորդը կնքել է պայմանագիր «Դիֆենս» ՍՊԸ-ի հետ, որով հայցվորը պարտավորվել է «Դիֆենս» ՍՊԸ-ին վճարել 600000 դրամ՝ գործի շրջանակներում դատավարական ներկայացուցչություն կատարելու, հայցադիմում կամ հակընդդեմ հայցի պատասխան կազմելու համար: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17 հոդվածի 2-րդ կետի՝ վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար: Բացի այդ հայցվորը կրել է նաև վնասներ՝ ի դեմս բաց թողնված օգուտի: Մասնավորապես, 2009թ.-ի դեկտեմբերի 5-ին, 6-ին, 12-ին և 13-ին պատասխանողը «Շանթ» հեռուստաընկերությամբ ցուցադրել է իր վստահորդի և պատասխանողի միջև 2008թ.-ի հոկտեմբերի 6-ին կնքված պայմանագրի շրջանակներում պատրաստված «32 ԱՏԱՄ» հումորային հեռուստահաղորդումը: Դրանով իսկ պատասխանողը խախտել է պայմանագրի մի շարք կետեր՝ ի դեմս 4.1, 4.2, 3.1.2 կետերի և այդ կետերին համապատասխանող իր վստահորդի իրավունքները: Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ պատասխանողը պարտավորվել է վճարել և վճարել է հայցվորին «32 ԱՏԱՄ» հեռուստահաղորդում պատրաստելու և պատասխանողի կողմից այն նկարահանելու և «Շանթ» հեռուստաընկերությամբ այն հեռարձակելու դիմաց: Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ պատասխանողը դեկտեմբեր ամսվա համար հայցվորին պետք է վճարեր 2120000 դրամ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե իրավունքը խախտած անձը դրա հետևանքով ստացել է եկամուտներ, ապա անձը, ում իրավունքը խախտվել է, մյուս վնասների հետ միասին բաց թողնված օգուտի հատուցման պահանջի իրավունք ունի՝ այդ եկամուտներից ոչ պակաս չափով: Այն, որ իր վստահորդը կարող է ստանալ 2120000 դրամ եկամուտ քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում հիմնավորվում է պայմանագրի նշված երկու 2.1.2 կետով: Եթե իր վստահորդի իրավունքը չխախտվեր՝ պատասխանողը հայցվորի համաձայնությամբ հեռարձակեր «32 ԱՏԱՄ» հաղորդումը, ապա հայցվորը կստանար եկամուտ 2120000 դրամի չափով, որը նա ստացել է քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում՝ պայմանգրի շրջանակներում համագործակցության ժամանակ: Պայմանագրի գործողության ժամկետը ավարտվել է 2009թ.-ի հուլիսի 31-ին: 2009թ.-ի սեպտեմբերի 12-ին պատասխանողը կնքել է մեկ այլ պայմանագիր «Երեսուներկու Փրոդաքշն» ՍՊԸ-ի հետ, որով վերջինը պարտավորվել է պատրաստել դարձյալ «32 ԱՏԱՄ» հեռուստահաղորդում, իսկ պատասխանողը պարտավորվել է նկարահանել և հեռարձակել այն «Շանթ» հեռուստաընկերությամբ՝ դրա դիմաց վճարելով «Երսուներկու Փրոդաքշն» ՍՊԸ-ին: Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանու իրավասության դատարանի վարույթում գտնվող թիվ ԵԱՔԴ 3033/02/09 քաղաքացիական գործով ինչպես դատաքննության ժամանակ, այնպես էլ իր կողմից դատարան ներկայացված հայցադիմումի պատասխանում պատասխանողը հայտարարել է, որ սկսած 2009թ.-ի դեկտեմբերի 1-ից պատասխանողը չի նկարահանել 2009թ.-ի սեպտեմբերի 12-ին նրա և «Երեսուներկու Փրոդաքշն» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի շրջանակներում պատրաստված «32 ԱՏԱՄ» հաղորդումներ: Հիմք ընդունելով վերը նշվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածները, հայցվորը դատարանից խնդրել է.

	պատասխանող «Շանթ» ՍՊ ընկերության Երևանի մասնաճյուղից առգրավվել և իրեն հանձնել պայմանագրով իր և պատասխանողի համագործակցության արդյունքում ստեղծված «32 ԱՏԱՄ» հումորային հեռուստահաղորդում» տեսալսողական ստեղծագործության տեսանյութերը՝ այնպիսի կրիչի միջոցով, որպիսի կրիչի օգտագործմամբ դրանք ստեղծվել են, պատասխանողին արգելել առանց իր թույլտվության հեռուստատեսությամբ ցուցադրել իր և պատասխանողի համագործակցության արդյունքում ստեղծված «32 ԱՏԱՄ» հումորային հեռուստահաղորդում տեսալսողական ստեղծագործության տեսանյութերը, ինչպես նաև պատասխանողից հօգուտ իրեն բռնագանձել 2720000 դրամ, որից 2120000 դրամը՝ բաց թողնված օգուտը և 600000 դրամը՝ իրավաբանական ծախսը: 3. Պատասխանողի դիրքորոշումը Պատասխանողի ներկայացուցիչներ Ա. Կարախանյանը և Մ. Ղուլյանը առարկելով հայցի դեմ, դատարանին հայտնել են, որ 2008թ.-ի հոկտեմբերի 6-ին «Շանթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Սրթի Թու Փրոդաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքվել է «32 ԱՏԱՄ» հումորային հաղորդման պատրաստման և հեռարձակման վերաբերյալ պայմանագիր: Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ կատարողը պատրաստում է, իսկ պատվիրատուն նկարահանում և «Շանթ» հետուստաընկերությամբ եթեր է հեռարձակում «32 ԱՏԱՄ» հումորային հեռուստահաղորդումը շաբաթական պարբերականությամբ՝ դրա դիմաց վճարելով կատարողին պայմանագրի 2.1 կետում նշված գումարի չափով: Պայմանագրի 8.3. կետի համաձայն՝ պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2009թ.-ի հուլիսի 31-ը: Պայմանագրով կրիչները վերադարձնելու պարտավորություն իրենց վստահորդը չի կրում: Նման պարտավորություն նույնիսկ պայմանագրի սահմանված ժամկետը դադարելուց հետո պայմանագրում նախատեսված չէ: Այդ կրիչները պատասխանողի սեփական գույքն են հանդիսանում և չեն կարող տրվել հայցվորին: «Շանթ» ՍՊ ընկերության, որպես հեռարձակող ընկերության՝ պայմանագրի ժամկետի ավարտից հետո հաղորդումը ցուցադրելու իրավունքը, սահմանված է «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով: «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 50 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հեռարձակող կազմակերպություն է համարվում այն անձը, որի նախաձեռնությամբ և պատասխանատվությամբ հեռարձակվում կամ պատրաստվում ու հեռարձակվում են հաղորդումներ: Համաձայն նույն օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի՝ հաղորդման նկատմամբ հեռարձակող կազմակերպության գույքային իրավունքները ծագում են առաջին հեռարձակման պահից և գործում են 50 տարի: Հայցվորը ներկայացրել է հաղորդման տեսանյութերը իրեն հանձնելու պահանջ այնպիսի կրիչի միջոցով, որպիսի կրիչի օգտագործմամբ դրանք ստեղծվել են: Նման պահանջ ներկայացնելով հայցվորը պետք է հիմնավորի հաղորդման տեսանյութերն ամրագրող կրիչների նկատմամբ իր կոնկրետ իրավունք (սեփականություն, օգտագործում, վարձակալություն և այլն) ունենալու հանգամանքը և պետք է հիմնավորի, որ այդ իրավունքը խախտվել է պատասխանողի կողմից: Ինչ վերաբերում է որոշակի իրավունք ունենալու հանգամանքին, ապա հայցադիմումը և հայցի առարկան փոխելու վերաբերյալ դիմումը ընթերցելով պարզ է դառնում, որ հայցվորին պատկանող որևէ իրավունքի մասին այնտեղ չի խոսվում:

Հայցվորը պնդում է, որ տեսանյութերը պետք է վերադարձվեն իրեն, բայց անհասկանալի է, թե արդյոք որևէ իրավունք ունի հայցվորը դրանց նկատմամբ, թե՝ ոչ: Բացի այդ, հայցվորը չի նշում կոնկրետ իրավունքի տեսակը, չի հիմնավորում նաև, թե այդ իրավունքը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով, թե նախատեսված է պայմանագրով:
Հայցադիմումում և հայցի առարկան փոխելու վերաբերյալ դիմումում որևէ իրավական ակտով երաշխավորված իրավունքների խախտման մասին նշում չկա: Ընդամենը խոսվում է 06.10.2008թ.-ի «32 ատամ հումորային հաղորդման պատրաստման և հեռարձակման» պայմանագրի որոշ դրույթների մասին, մասնավորապես, ըստ հայցվորի պատասխանողը խախտել է պայմանագրի 4.1, 4.2, 3.1.2 կետերի պահանջները:
Պատասխանողը թույլ չի տվել և չէր կարող թույլ տալ պայմանագրի պահանջների խախտում, քանի որ պայմանագիրը չի գործում 31.07.2009թ.-ից սկսած: Այսինքն, հայցվորը չի կարող հղում կատարել պայմանագրի դրույթներին այն պարզ պատճառով, որ պայմանագիրը ներկայումս կողմերի համար որևէ իրավունք կամ պարտականություն չի սահմանում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածի առաջին մասի համաձայն պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով: Պայմանագրում հստակ սահմանվել է գործողության ժամկետ, որի լրանալով կողմերի իրավունքները և պարտականությունները դադարել են:
Բացի այդ, պայմանագրի 3.1.2 կետի համաձայն՝ պատվիրատուն պարտավոր է պայմանագրի գործողության ընթացքում յուրաքանչյուր շաբաթ «Շանթ» հեռուստաալիքով 3 անգամ եթեր հեռարձակել «32 ատամ» հաղորդումը (1 հիմնական և 2 կրկնություն): Պայմանագրի առարկա հանդիսացող հաղորդման նկատմամբ հեղինակային իրավունքների վերաբերյալ հայցվորի և պատասխանողի գրավոր համաձայնությունը սահմանվել է պայմանագրի 4-րդ բաժնում, որի 4.1 կետի համաձայն՝ պայմանագրի շրջանակներում պատրաստված հաղորդումների հեռուստատեսային ցուցադրումը կարող է իրականացվել բացառապես սույն պայմանագրի գործողության ժամկետներում, բացառապես պատվիրատուի կողմից և բացառապես «Շանթ» հեռուստաալիքով:
Նշված կետերից որևէ մեկը չի սահմանում հաղորդման ամրագրմամբ կրիչների նկատմամբ հայցվորի որևէ իրավունք, հետևաբար դրանց հղում կատարելը բոլորովին անիմաստ է:
Փոխարենը նշված 4.2 կետը սահմանում է, որ հեռուստատեսային ցուցադրման իրավունքը հայցվորին չի պատկանում:
Ակնհայտորեն հայցվորի պահանջն առարկայազուրկ է, քանի որ հայցվորը պահանջում է իրեն փոխանցել մի բան, որի նկատմամբ իր իրավունքները չի հիմնավորում: Ինչ վերաբերում է հաղորդման տեսանյութերին, ապա հայցվորը դրանց տիրապետում է: Հայցվորը ոչ միայն ունի այն տեսանյութերը որոնք պահանջում է իրենց վստահորդից, այլև ունի դրանք հենց այն կրիչով, որով պահանջում է, քանի որ օգտագործում և տնօրինում է դրանք (խոսքը տեսասկավառակների մասին է, որոնք թողարկել է հայցվորը և իրացնում է): Այսինքն, հայցվորի նպատակը ոչ թե այդ տեսանյութերը որոշակի կրիչով ունենալն է (քանի որ նա արդեն իսկ ունի այդ տեսանյութերը), այլ՝ պատասխանողին վնաս պատճառելը, ինչն օրենքով արգելված է:
Կողմերի միջև կնքված պայմանագրի գործողության ընթացքում կողմերից յուրաքանչյուրը պատշաճ կերպով կատարել է իր պարտավորությունները: Պայմանագրի ժամկետը լրացել է 31.07.2009թ.-ին:
Շուրջ 5 ամիս անց հայցվորը դիմել է դատարան և պահանջում է պատասխանողին արգելել ցուցադրել հաղորդումը կրկին անգամ առանց հստակեցնելու, թե իր որ իրավունքն է խախտվել և պատասխանողի որ գործողությամբ: Բացի այդ հայցվորը չի

	ներկայացրել դատարանին իր իրավունքի խախտումը հաստատող որևէ ապացույց: Հայցվորի կողմից որպես իր իրավունքի խախտման միակ ապացույց ներկայացվել է «Տելեմեդիակոնտրոլ» ՓԲԸ կողմից 25.01.2010թ.-ին տրված թիվ 001 գրությունը: Նշված գրությամբ բառացիորեն ասվում է հետևյալը՝ Ի պատասխան Ձեր հարցմանը տրամադրում ենք «Շանթ» հեռուստաալիքով հեռարձակված «32 ԱՏԱՄ ԱԿՈՒՄԲ» հեռուստածրագրի վերաբերյալ տեղեկատվություն: Վերոնշյալ ծրագիրը 01.12.2009թ.-ից մինչև 31.12.2009թ.-ը ընկած ժամանակահատվածում եթեր է հեռարձակվել հետևյալ հաճախականությամբ: Այնուհետև բերված է աղուսյակ ցուցադրման հաճախականության վերաբերյալ: Նշված տեղեկանքը չի հիմնավորում հայցվորի այն պնդումը, որ «Շանթ» հեռուստաընկերությամբ հայցվորի և պատասխանողի միջև կնքված պայմանագրի շրջանակներում ստեղծված հաղորդումները այդ պայմանագրի ժամկետի ավարտից հետո ցուցադրվել են: Առավել ևս, որ իրենց վստահորդը նշված ժամանակահատվածում պայմանագրային հարաբերություններ է ունեցել «32 Փրոդաքշն» ՍՊԸ-ի հետ, որի շրջանակներում պատրաստվել և ցուցադրվել է նույնանման հաղորդում: Այսինքն, հայցվորը պետք է հիմնավորի նաև, որ 01.12.2009թ.-ից մինչև 31.12.2009թ.-ը ցուցադրված հաղորդումների նկատմամբ իրավունքները պատկանում են հայցվորին: «Դիֆենս» ՍՊԸ-ի և հայցվորի միջև 21.01.2010թ.-ին կնքված պայմանագրի 3.1. կետի համաձայն՝ պայմանագրի գինը կազմում է 600000 դրամ, որը վճարվում է նույն պայմանագրի 3.2 և 3.3 կետերի համաձայն: Պայմանագրի 3.2 կետի համաձայն 300000 դրամը վճարվում է պայմանագրի կնքման օրվանից 5 օրվա ընթացքում, իսկ 3.3 կետի համաձայն՝ մնացած 300000 դրամը, սույն քաղաքացիական գործով վճռի հարապարակման օրվանից 5 օրվա ընթացքում, ընդ որում պայմանագրի 3.3 կետով նախատեսված գումարը վճարվում է այն դեպքում, երբ սույն գործով հայցն ամբողջությամբ բավարարվում է: Հայցվորը որպես պահանջ ներկայացրել է կատարված իրավաբանական ծախսի փոխհատուցում 600000 դրամի չափով այն դեպքում, երբ իր կողմից վճարվել է այդ գումարի կեսը՝ 300000 դրամը (հիմք վճարման հանձնարարական, իրավաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրի 3.2 և 3.3 կետեր): Հայցվորի կողմից որպես պահանաջի իրավական հիմնավորում նշվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածը: Կարծում ենք ակնհայտ է, որ իրավաբանին վճարված պարգևավճարը չի կարող համարվել վնաս: Պայմանագրի 3.3 կետում հստակ նշված է, որ ևս 300000 դրամ կվճարվի հայցն ամբողջությամբ բավարարվելու դեպքում միայն: Ինչ վերաբերում է հայցվորի մյուս պահանջին՝ բացթողնված օգուտի փոխհատուցման մասին, ապա որպես այս պահանջի իրավական հիմք ներկայացվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը: Փաստորեն, հայցվորը նախ պնդում է, որ իրենց վստահորդը իրավունք չունի ցուցադրելու հաղորդումները, այնուհետև, նշում, որ դրանց ցուցադրման համար նրան պետք է վճարվեր ինչ-որ գումար: Հայցվորի այս պահանջը հստակ չէ՝ պարունակում է լուրջ հակասություններ: Որպես պահանջի չափի հիմնավորում հայցվորի կողմից նշվում է կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված գումարի չափը, ինչը տվյալ դեպքում առնվազն անհեթեթ է, քանի որ պահանջը վերաբերվում է հաղորդման կրկնություններին, ոչ թե նոր ստեղծված հաղորդումներին, իսկ պայմանագրով նախատեսված վճարը վերաբերում է նոր ստեղծվող հաղորդումներին: Պայմանագրով սահմանված վճարը նախատեված է նոր հաղորդման նկարահանման և ցուցադրման համար, այլ ոչ թե կրկնության

ցուցադրման:
Հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող ստեղծագործությունների հեռարձակման վճարի չափը սահմանվում է համաձայն՝ ՀՀ Կառավարության 11 հունվարի 2007թ.-ի թիվ 506-Ն «Ստեղծագործությունների հրապարակային կատարման, հեռարձակման, ձայնագրությունների միջոցով վերարտադրության վարձույթով տալու, դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործություններն արդյունաբերության մեջ վերարտադրելու համար հեղինակային վարձատրության նվազագույն դրույքաչափերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 1999 թվականի ապրիլի 22-ի N 251 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման:
Հիմք ընդունելով վերը նշվածը՝ պատասխանողի ներկայացուցիչները դատարանից խնդրել են հայցն ամբողջությամբ մերժել:

II

Դատարանի պատճառաբանությունները և հետևությունները

Ուսումնասիրելով քաղաքացիական գործի նյութերը, յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների համակցությամբ, լսելով հայցվորի ներկայացուցչի և պատասխանողի ներկայացուցիչների ցուցմունքները՝ դատարանը գտավ, որ հայցը ենթակա է մասնակի բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

1. Գործի փաստական հանգամանքները
Գործի նյութերով հիմնավորվել է, որ 06.10.2008թ.-ին «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊ ընկերության և «Շանթ» ՍՊ ընկերության Երևանի մասնաճյուղի միջև կնքվել է «32 ատամ» հումորային հաղորդման պատրաստման և հեռարձակման» մասին պայմանագիր, որով կատարողը («Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊԸ-ն) պարտավորվել է պատրաստել, իսկ պատվիրատուն («Շանթ» ՍՊ ընկերության Երևանի մասնաճյուղը)՝ նկարահանել և «Շանթ» հեռուստատեսությամբ եթեր հեռարձակել «32 ԱՏԱՄ» հումորային հեռուստահաղորդումը՝ շաբաթական պարբերականությամբ՝ դրա դիմաց վճարելով կատարողին պայմանագրի 2.1. կետում նշված գումարի չափով: Նշված պայմանագրի գործողության ժամկետը ավարտվել է 2009թ.-ի հուլիսի 31-ին:
«Տելեմեդիակոնտրոլ» ՓԲ ընկերության կողմից 25.01.2010թ.-ին (ուղղված գործընկերներին) տրված տեղեկանքի համաձայն՝ «32 ԱՏԱՄ ԱԿՈՒՄԲ» հեռուստահաղորդումը «Շանթ» հեռուստալիքով 01.12.2009թ.-ից մինչև 31.12.2009թ.-ը ընկած ժամանակահատվածում եթեր է հեռարձակվել հետևյալ հաճախականությամբ՝ 05.12.2009թ.-ին, 06.12.2009թ.-ին, 12.12.2009թ.-ին և 13.12.2009թ.-ին:
«Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊ ընկերության և «Դիֆենս» ՍՊ ընկերության միջև 21.01.2010թ.-ին կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն՝ կատարողը («Դիֆենս» ՍՊԸ-ն) պարտավորվել է «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊԸ-ն ընդդեմ «Շանթ» ՍՊԸ-ի Երևանի մասնաճյուղի քաղաքացիական գործի շրջանակներում դատական ներկայացուցչություն իրականացնել ՀՀ ընդհանուր իրավասության դատարանում (ՀՀ Դատական համակարգի առաջին ատյանի դատարանում՝ բացառությամբ հետագայում ՀՀ դատական համակարգի վերադաս ատյանի կողմից բեկանված գործերի), ինչպես նաև պատվիրատուի հանձնարարությամբ այդ գործով հայցադիմում կամ հակընդդեմ հայցի պատասխան կազմել, իսկ պատվիրատուն պարտավորվել է կատարողին վճարել 600000 դրամ, որից 300000 դրամը՝ պայմանագիրը ստորագրելուց հետո 5 բնակային օրվա ընթացքում, իսկ մյուս 300000 դրամը՝ ՀՀ դատական համակարգի առաջին

ատյանի դատարանի կողմից վճռի կայացման պահից 5 բանկային օրվա ընթացքում: Ընդ որում, նշված գումարը պատվիրատուն կատարողին վճարում է այն դեպքում, եթե նշված վճռով ամբողջությամբ բավարարվում է պատվիրատուի հայցապահանջը:
25.01.2010թ.-ի թիվ 22000250110885 վճարման համաձայնագրի համաձայն՝ «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊԸ-ն «Դիֆենս» ՍՊԸ-ին վճարել է 300000 դրամ՝ «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊԸ-ին մատուցված իրավաբանական ծառայությունների դիմաց:
ԴԱՀԿ ապահովող ծառայության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժնի ավագ հարկադիր կատարող Ա. Մեժլումյանի 13.01.2010թ.-ի կատարողական վարույթն ավարտելու մասին որոշման համաձայն՝ 24.12.2009թ.-ի որոշմամբ արգելվել է պատասխանող «Շանթ» ՍՊ ընկերության Երևանի մասնաճյուղին հեռուստատեսությամբ կամ այլ եղանակով ցուցադրել հայցվոր «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊ ընկերության և նրա միջև կնքված պայմանագրով ստեղծված «32 ԱՏԱՄ հումորային հեռուստահաղորդում» տեսալսողական ստեղծագործության տեսանյութերը:

2. Դատարանի իրավական վերլուծությունը և հետևությունները
Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 436 հոդվածի 3-րդ կետի՝ «պայմանագրից ծագող պարտավորությունների նկատմամբ կիրառվում են պարտավորությունների մասին ընդհանուր դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի և պայմանագրերի առանձին տեսակների մասին սույն օրենսգրքի կանոններով»:
Նույն օրենսգրքի 437 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ կողմերը կարող են կնքել օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված մի քանի պայմանագրերի տարրեր պարունակող պայմանագիր (խառը պայմանագիր):
Խառը պայմանագրի կողմերի հարաբերությունների նկատմամբ համապատասխան մասերով կիրառվում են այն պայմանագրերի մասին կանոնները, որոնց տարրերը պարունակում են խառը պայմանագրում, եթե այլ բան չի բխում կողմերի համաձայնությունից կամ խառը պայմանագրի էությունից:
06.10.2008թ.-ին «Շանթ» ՍՊ ընկերության Երևանի մասնաճյուղի, որպես պատվիրատուի և «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊ ընկերության, որպես կատարողի, միջև կնքվել է «32 ԱՏԱՄ» հումորային հաղորդման պատրաստման և հեռարձակման պայմանագիր, որը պարունակում է պարտավորության դրույթներից ծագող և հեղինակային պայմանագրին բնորոշ տարրեր, ինչպես նաև մտավոր սեփականությանը վերաբերվող լիցենզային պայմանագրի տարրեր:
Պայմանագրի 1.1 կետով սահմանվել է, որ կատարողը (հայցվորը) պատրաստում է, իսկ պատվիրատուն (պատասխանողը) նկարահանում և «Շանթ» հեռուստատեսությամբ եթեր է հեռարձակում «32 ԱՏԱՄ» հումորային հեռուստահաղորդումը՝ շաբաթական պարբերականությամբ՝ դրա դիմաց վճարելով կատարողին սույն պայմանագրի 2.1. կետում նշված գումարի չափով, իսկ այդ կետով սահմանվել է յուրաքանչյուր ամսվա համար վճարման ենթակա գումարի չափը:
Համաձայն կողմերի միջև 06.10.2008թ.-ին կնքված պայմանագրի 4.2 կետի՝ «սույն պայմանագրի շրջանակներում պատրաստված հաղորդումների հեղինակային բոլոր իրավունքները, բացառությամբ հեռուստատեսային ցուցադրման իրավունքի, սույն պայմանագրի գործողության ընթացքում և դրանից հետո պատկանում են կատարողին, տվյալ դեպքում «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊԸ-ին:
Համաձայն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1103 հոդվածի 1-ին կետի՝ մտավոր գործունեության արդյունքի հեղինակի իրավունքը հեղինակային իրավունք անձնական ոչ գույքային իրավունք է և կարող է պատկանել միայն այն անձին, ում ստեղծագործական աշխատանքով ստեղծվել է մտավոր գործունեության արդյունքը:
Նույն օրենսգրքի 1110 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բացառիկ իրավունքների պաշտպանությունն իրականացվում է սույն

	օրենսգրքի 14 հոդվածով նախատեսված եղանակներով: Բացառիկ իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացվել նաև բացառիկ իրավունքերի խախտման համար հիմք ծառայած և նման խախտման արդյունքում ստեղծված նյութական օբյեկտների առգրավմամբ: Պատասխանողի ներկայացուցիչները հայցադիմումի պատասխանում և դատաքննության ընթացքում չառարկեցին, որ «32 ատամ» հումորային հաղորդման տեսանյութերը գտնվում են պատասխանողի մոտ, այլ ցուցմունք տվեցին այն մասին, որ տեսալսողական ստեղծագործության տեսանյութերը նույն կրիչով առկա են նաև հայցվորի մոտ, որոնք վերջինը թողարկում է և իրացնում, սակայն նշվածի վերաբերյալ որևէ ապացույց դատարանին չներկայացվեց: Մինչդեռ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածի 1-ին կետի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, իսկ նույն օրենսգրքի 49 հոդվածի համաձայն՝ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք: Հետևաբար պատասխանողը պայմանագրի շրջանակներում պատրաստված տեսալսողական ստեղծագործությունները չվերադարձնելով իրավատիրոջը հայցվորին, խախտում է վերջինիս հեղինակային բացառիկ իրավունքները: Բացի այդ, կողմերի միջև կնքված պայմանագիրի գործողության ժամկետի ավարտի դեպքում, հայցվորի հեղինակային իրավունքը ենթակա է պաշտպանության՝ ստեղծագործության արդյունքները բնօրինակով իրավատիրոջը վերադարձնելու և դրանց հետագա ցուցադրումը պատասխանողին արգելելու միջոցով: Պատասխանողի ներկայացուցիչների հղումը «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 50, 61 հոդվածներին և պատճառաբանությունը, որ կողմերի փոխգործունեության արդյունքում պատրաստված ստեղծագործությունների նկատմամբ գույքային իրավունքները պատկանում են իրենց վստահորդ «Շանթ» ՍՊԸ-ին, հայցն ամբողջությամբ մերժելու հիմք չի կարող հանդիսանալ, քանի որ այն չի բխում կողմերի միջև կնքված պայմանագրից և հեղինակային իրավունքի վերաբերյալ գործող օրենսդրությունից: Տվյալ դեպքում վեճը վերաբերվում է ոչ թե կրիչներին, որոնք ըստ պատասխանողի ներկայացուցիչների, պատկանում են իրենց վստահորդին, այլ դրանց վրա ստեղծված մտավոր սեփականության օբյեկտին: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1119 հոդվածի 1-ին կետի՝ ստեղծագործությունների ստեղծումը կազմակերպող անձինք հանրագիտարանների հրատարակիչները, ֆիլմի պատրաստողները, պրոդյուսերները և այլոք չեն համարվում համապատասխան ստեղծագործությունների հեղինակներ: Սակայն, սույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում, նման անձինք՝ բացառիկ իրավունքներ են ձեռք բերում այդ ստեղծագործությունների օգտագործման նկատմամբ: Կողմերի համագործակցության արդյունքում ստեղծված տեսալսողական հումորային ստեղծագործության նկատմամբ պատասխանողի օգտագործման իրավունքը սահմանվել է պայմանագրի 4.1 կետով, ըստ որի սույն պայմանագրի շրջանակներում պատրաստված հաղորդումների հեռուստատեսային ցուցադրումը կարող է իրականացվել բացառապես սույն պայմանագրի գործողության ժամկետներում, բացառապես պատվիրատուի կողմից և բացառապես «Շանթ» հեռուստաալիքով: Վերը նշված կետով հստակ սահմանվել է, որ պայմանագրի շրջանակներում պատրաստված ստեղծագործությունը պետք է հեռարձակվի միայն պայմանագրի գործողության ժամկետներում: Նշվածներից նաև հետևում է, որ բացի «Շանթ» հեռուստատեսությամբ, համապատասխան ժամանակահատվածում,

կողմերի համագործակցության արդյունքում ստեղծված տեսանյութերը հեռարձակելու իրավունքից, պատասխանողն այդ ստեղծագործությունների նկատմամբ, որևէ իրավունք չունի:
Պայմանագրի 8.3 կետով նախատեսվել է, որ այն գործում է մինչև 2009թ.-ի հուլիսի 31-ը, հետևաբար սահմանվել է պարտավորությունների և որոշակի գործողությունների կատարման հստակ ժամկետ, որոնք ենթակա են կատարման պայմանագրի ընդհանուր ժամկետներում:
Դատաքննությամբ հիմնավորվել է, որ պատասխանողը պայմանագրի գործողության շրջանակներում պատրաստված և հեռարձակված տեսանյութերի դիմաց ամբողջությամբ վճարել է հայցվորին:
Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17 հոդվածի 1-ին կետի՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե իրավունքը խախտած անձը դրա հետևանքով ստացել է եկամուտներ, ապա անձը, ում իրավունքը խախտվել է, մյուս վնասների հետ միասին բաց թողնված օգուտի հատուցման պահանջի իրավունք ունի՝ այդ եկամուտներից ոչ պակաս չափով:
Տվյալ դեպքում հայցվորը վկայակոչելով վերը նշված հոդվածը և կողմերի միջև կնքված պայմանագրի 4.1 կետը, դատաքննության ընթացքում պնդել է, որ պատասխանողի կողմից «32 ԱՏԱՄ ԱԿՈՒՄԲ» հեռուստածրագիրը «Շանթ» հեռուստաալիքով պայմանագրի ավարտից հետո՝ 01.12.2009թ.-ից մինչև 31.12.2009թ.-ը ընկած ժամանակահատվածում, եթեր է հեռարձակվել 05.12.2009թ.-ին, 06.12.2009թ.-ին, 12.12.2009թ.-ին և 13.12.2009թ.-ին, որի համար պատասխանողը իրեն չի վճարել և որպես բաց թողնված օգուտի հատուցում պահաջել է պատասխանողից հօգուտ իրեն բռնագանձել 2120000 դրամ:
Հայցվորը, որպես վկայակոչված փաստի ապացույց, դատարան է ներկայացրել «Տելեմեդիակոնտրոլ» ՓԲ ընկերության կողմից 25.01.2010թ.-ին տրված տեղեկանքը՝ ուղղված գործընկերներին, որում բառացի նշված է՝ «Ի պատասխան Ձեր հարցմանը տրամադրում ենք «Շանթ» հեռուստաալիքով հեռարձակված «32 ԱՏԱՄ ԱԿՈՒՄԲ» հեռուստածրագրի վերաբերյալ տեղեկատվություն: Վերոնշյալ ծրագիրը 01.12.2009- 31.12.2009 ժամանակահատվածում եթեր է հեռարձակվել հատկյալ հաճախականությամբ:» Ստորև տեղադրված ցանկում նշվել է՝ «05.12.2009թ.-ին, 06.12.2009թ.-ին, 12.12.2009թ.-ին և 13.12.2009թ.-ին»:
Ուսումնասիրելով «Տելեմեդիակոնտրոլ» ՓԲ ընկերության կողմից տրված տեղեկանքը, դատարանը գտնում է, որ նշված տեղեկանքը չի կարող պատասխանողից 2120000 դրամ գումարի բռնագանձման պահանջը հիմնավորող ապացույց դիտվել, քանի որ տեղեկանքում նշված չէ, թե ում հարցմանն ի պատասխան է տրամադրվել վերը նշված տեղեկատվությունը, մասնավորապես՝ ովքեր են հանդիսացել «գործընկերները», ինչպես նաև հիմնավորված չէ, որ հատկապես հայցվորի և պատասխանողի միջև կնված պայմանագրի արդյունքում ստեղծված տեսանյութերն են հեռարձակվել:
Տեղեկանքում նշված ժամանակահատվածում պատասխանողը պայմանագրային վիճարկվող հարաբերություններ է ունեցել նաև «32 Փրոդաքշն» ՍՊԸ-ի հետ, որի շրջանակներում պատրաստվել է նույնանման հաղորդում: Մասնավորապես, դատաքննությամբ հիմնավորվեց, որ երկու դեպքում էլ մտավոր ստեղծագործության արդյունքները անվանվել են «32 ակումբ»: Հայցվորը չի հիմնավորել, որ 01.12.2009թ.-ից մինչև 31.12.2009թ.-ը ցուցադրված հաղորդումների նկատմամբ իրավունքները հատկապես պատկանում են իրեն: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական

ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:
Բացի այդ, նույնիսկ եթե ներկայացվեր ապացույց այն մասին, որ պատասխանողը պայմանագրի ավարտից հետո ցուցադրել է հեռուստահաղորդման կրկնությունները, հայցվորը չի հիմնավորել, թե ինչպես է հաշվարկել 2120000 դրամը, որպես բաց թողնված օգուտ, քանի որ պայմանագրով պատվիրատուն կատարողին 2008թ.-ի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար ամսական վճարել է 212000 դրամ 1 նոր նկարահանված հաղորդման և 2 կրկնությունների համար, իսկ տվյալ դեպքում պատասխանողը չէր կարող նոր նկարահանված տեսանյութ հեռարձակել, քանի որ պայմանագրի ավարտից հետո այլևս նոր տեսանյութ չի նկարահանվել:
Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17 հոդվածի 2-րդ կետի՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերակնգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը /իրական վնաս/:
Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68 հոդվածի 1-ին կետի՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:
Տվյալ դեպքում դատարանը գտնում է, որ հայցվորի մյուս պահանջը, որպեսզի պատասխանող ընկերությունից բռնագանձվի նաև իր իրավունքների և շահերի ներկայացման ու պաշտպանման համար իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությանը վճարված 300000 դրամը և որպես «խրախուսանք» ապագայում վճարվելիք 300000 դրամ գումարները, չի կարող ամբողջությամբ բավարարվել, քանի որ հայցը բավարարման դեպքում ըստ էության որպես «պարգև» վճարվելիք 300000 դրամը չի կարող դիտվել, որպես փաստաբանի խելամիտ վարձատրություն, կամ կրած վնաս:
Նշված պահանջը չի բխում վերը նշված հոդվածների բովանդակությունից:
Բացի այդ սույն գործով հայցը ամբողջությամբ բավարարման ենթակա չէ, հետևաբար, որպես «խրախուսանք» 300000 դրամ գումար «ԴԻՖԵՆՍ» ՍՊԸ-ին հայցվորի կողմից, ըստ պայմանագրի բովանդակության չպետք է վճարվի:
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-131 հոդվածներով, դատարանը.

ՎՃՌԵՑ

1. «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Շանթ» ՍՊ ընկերության Երևանի մասնաճյուղի՝ գումարի բռնագանձման, հեղինակային բացառիկ գույքային իրավունքի պաշտպանության, «32 ԱՏԱՄ» հումորային հեռուստահաղորդում» տեսալսողական ստեղծագործության տեսանյութերը այնպիսի կրիչի միջոցով, որպիսի կրիչի օգտագործմամբ դրանք ստեղծվել են, հայցվորին վերադարձնելու և նկարահանված հաղորդման տեսանյութերը առանց հայցվորի թույլտվության հեռուստատեսությամբ ցուցադրելը պատասխանողին արգելելու պահանջների մասին, բավարարել մասնակի:
2. «Շանթ» ՍՊ ընկերության Երևանի մասնաճյուղից առգրավվել և «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊ ընկերությանը հանձնել կողմերի համագործակցության արդյունքում, 06.10.2008թ.-ին կնքված պայմանագրի շրջանակներում ստեղծված «32 ԱՏԱՄ» հումորային հեռուստահաղորդում» տեսալսողական ստեղծագործության տեսանյութերը՝ այնպիսի կրիչի միջոցով, որպիսի կրիչի օգտագործմամբ դրանք ստեղծվել են:
3. «Շանթ» ՍՊ ընկերության Երևանի մասնաճյուղին արգելել «Շանթ»

	հեռուստաալիքով առանց հայցվորի թույլտվության ցուցադրել 06.10.2008թ.-ի պայմանագրի հիման վրա «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊԸ-ի և «Շանթ» ՍՊ ընկերության Երևանի մասնաճյուղի համագործակցության ընթացքում նկարահանված հաղորդման բոլոր մասերի կրկնությունները: 4. «Շանթ» ՍՊ ընկերության Երևանի մասնաճյուղից հօգուտ «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊԸ-ի բռնագանձել 300000 (երեք հարյուր հազար) դրամ, որպես հայցվորի կողմից փաստացի կատարված դատական ծախս: 5. «Շանթ» ՍՊ ընկերության Երևանի մասնաճյուղից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 6000 (վեց հազար) դրամ, որպես բավարարված հայցագնի 2%-ի չափով պետական տուրք: 6. Հայցը՝ 2420000 (երկու միլիոն չորս հարյուր քսան հազար) դրամ գումարի բռնագանձման պահանջի մասով, մերժել: 7. «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊԸ-ից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 48400 (քառասունութ հազար չորս հարյուր) դրամ, որպես մերժված հայցագնի 2%-ի չափով պետական տուրք: 8. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին: 9. Սույն դատական ակտը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում: ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. ԱՐԱՄՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	05-03-2010
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	54400
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	06-04-2010
էջերի քանակը:	100
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	07.09.2010թ.-ին տրվել է կատարողական թերթ
Ամսաթիվ:	07-04-2010
էջերի քանակը:	100
Գործին կից նյութերը:	
Որ դատարան է ուղարկվել:	Քաղաքացիական վերաք.
Ուր է ուղարկվել:	
Ելքի գրության համար:	Ե-4067
Ամսաթիվ:	12-04-2010
Ամսաթիվ:	06-08-2010
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	11-08-2010

էջերի քանակը:	146
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	

Դատական Գործ N: ԵԱՔԴ/3185/02/09

Ամսաթիվ:	01-04-2010
Բողոք բերող անձը	
Անուն:	«Շանթ » ՍՊԸ
Հասցե:	
Ներկայացուցիչ	
Անուն	Արամ
Ազգանուն	Կարախանյան
Հասցե	
Ում կողմից է բերվել բողոքը:	Պատասխանողի ներկայացուցիչ
Պետական տուրք:	20000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխան բերող անձը	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	05.03.10 Բավարարվել է մասնակի
Գործի համարը:	ԵԱՔԴ/3185/02/09

Ամսաթիվ:	10-04-2010
Վիճակագրական տողի համարը:	5.3
Գործի համարը:	ԵԱՔԴ/3185/02/09
Գործը բաղկացած է (հատորը / էջերի քանակ):	100թ.
Գործը ստացվել է:	Արաբկիր Քանաքեռ-Զեյթուն

Ամսաթիվ:	12-04-2010
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Տարոն Մանվելի Նազարյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Տիգրան Սահակյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Կարինե Հակոբյան

Այլ նշումներ:	

Երբ:	28-04-2010
Որոշումը ուղարկվել է կողմերին:	03-05-2010
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	03-05-2010
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	26-05-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	03-05-2010
Ժամ:	12:45
Նիստերի դահլիճի համարը:	104

Ամսաթիվ:	03-06-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	
Ժամ:	15:10
Նիստերի դահլիճի համարը:	104

Ամսաթիվ:	03-06-2010
Դատական ակտը բեկանվել է ամբողջությամբ:	Հաստատվել է կողմերի հաշտության համաձայնություն
Դատական ակտը բեկանվել է մասնակի:	
Այլ նշումներ:	

Դատական ակտ:	+

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/3185/02/09
շրջանների ընդհանուր իրավասության դատարան
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/3185/02/09
Նախագահող դատավոր Ս.Արամյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ՝
Վերաքննիչ դատարան)՝

նախագահությամբ՝ Տ. Նազարյանի
մասնակցությամբ դատավորներ՝ Կ. Հակոբյանի
Տ. Սահակյանի
քարտուղարությամբ՝ Դ. Աղանյանի

մասնակցությամբ՝
հայցվորի ներկայացուցիչ՝ Դավիթ Հունանյանի
պատասխանողի ներկայացուցիչ՝ Մարիամ Ղուլյանի

2010 թվականի հունիսի 3-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Շանթ» ՍՊԸ-ի Երևանի մասնաճյուղի վերաքննիչ բողոքը Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 05.03.2010 թվականի թիվ ԵԱՔԴ/3185/02/09 վճռի դեմ,
Պ Ա Ր Զ Ե Ց
1. Գործի դատավարական նախապատմությունը.
«Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊԸ-ն հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ «Շանթ» ՍՊԸ-ի Երևանի մասնաճյուղի՝ գումարի բռնագանձման« հեղինակային բացառիկ գույքային իրավունքի պաշտպանության, «32 ԱՏԱՄ» հումորային հեռուստահաղորդում» տեսալսողական ստեղծագործության տեսանյութերը այնպիսի կրիչի միջոցով« որպիսի կրիչի օգտագործմամբ դրանք ստեղծվել են« հայցվորին վերադարձնելու և նկարահանված հաղորդման տեսանյութերը առանց հայցվորի թույլտվության հեռուստատեսությամբ ցուցադրելը պատասխանողին արգելելու պահանջների մասին:
Դատարանի՝ 05.03.2010 թվականի թիվ ԵԱՔԴ/3185/02/09 վճռով հայցը բավարարվել է մասնակի:
«Շանթ» ՍՊԸ-ի Երևանի մասնաճյուղը վերոնշյալ վճռի դեմ 01.04.2010 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք:
Վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացվել:
26.05.2010 թվականի դատական նիստի ժամանակ նիստին ներկայացած կողմերը Վերաքննիչ դատարանին ներկայացրեցին «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊԸ-ի և «Շանթ» ՍՊԸ-ի Երևանի մասնաճյուղի միջև կնքված հաշտության համաձայնությունը և խնդրեցին հաստատել այն:
Դատարանին ներկայացված հաշտության համաձայնությունն ունի հետևյալ բովանդակությունը՝
«ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան «26» մայիսի 2010թ.

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ «Դատարան») վարույթում է գտնվում թիվ ԵԱՔԴ/3185/02/09 քաղաքացիական գործն (այսուհետ՝ «Գործ») ըստ հայցի՝ «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊ ընկերության ընդդեմ «Շանթ» ՍՊ ընկերության Երևանի մասնաճյուղի.
«Սրթի Թու Փրոդաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 00094779, գրանցման համար՝ 264.110.07744, գրանցման օրը՝ 19.12.2006թ., վկայականի համար՝ 03Ա074259), հասցե՝ ք. Երևան, Արաբկիր, Արաբկիր 41-3) ի դեմս տնօրեն՝ Կարեն Բաբաջանյանի, որը գործում է համաձայն ընկերության կանոնադրության և ՀՀ օրենքների (այսուհետ նաև՝ Հայցվոր), մի կողմից, և
«Շանթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Երևանի մասնաճյուղը (ՀՎՀՀ՝ 05504868, պետական գրանցման վկայական՝ 01Ա 014796, պետական գրանցման համար՝ 29.110.00409, հասցե՝ ք. Երևան, Կիևյան 16), ի դեմս կառավարիչ Լ. Սողոյանի, որը գործում է համաձայն ընկերության կանոնադրության և ՀՀ օրենքների (այսուհետ նաև՝ Պատասխանող), մյուս կողմից, միասին նաև «Կողմեր»,
կնքեցին սույն հաշտության համաձայնությունը (այսուհետ՝ «Համաձայնություն») ստորև շարադրվածի մասին.
1. Համաձայնությամբ Կողմերը հաստատում են, որ 06.10.2008 թ.-ին Հայցվորի և Պատասխանողի միջև կնքված «32 ատամ հումորային

հաղորդման պատրաստման և հեռարձակման» պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») շրջանակներում պատրաստված հաղորդումների նկատմամբ հեղինակային բոլոր իրավունքները, այդ թվում՝ բացառիկ գույքային, պատկանում են Հայցվորին:
2. Հայցվորը հրաժարվում է Պատասխանողին Գործի շրջանակներում ուղղված իր բոլոր պահանջներից, այդ թվում՝ գումարային:
3. Պատասխանողը պարտավորվում է առանց Հայցվորի թույլտվության չօգտագործել 06.10.2008թ. Պայմանագրի շրջանակներում ստեղծված «32 ատամ» հումորային հաղորդումները:
4. Գործով պետական տուրքի վճարումը կատարվում է Հայցվորի կողմից:
5. Սույն հաշտության համաձայնությունը հաստատող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից գործով կիրառված բոլոր արգելանքները համարվում են վերացված:
6. Համաձայնությունը կնքվել է Կողմերի կողմից կամավոր կերպով:
7. Համաձայնությունը կազմված է երեք օրինակից:
8. Համաձայնությունը կնքելիս Կողմերը ծանոթ են ՀՀ քաղաքացիական դատավարության 33-րդ և 109-րդ հոդվածների պահանջներին, ինչպես նաև գիտակցում են հաշտության համաձայնության հաստատման և գործի վարույթի կարճման հետևանքները:
9. Սույնով Կողմերը դատարանից խնդրում են հաստատել Համաձայնությունը և թիվ ԵԱՔԴ/3185/02/09 քաղաքացիական գործի վարույթը կարճել:

10. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հայցվոր Պատասխանող
«Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊԸ «Շանթ» ՍՊԸ-ի Երևանի մասնաճյուղ
Հասցե՝ ք. Երևան, Արաբկիր 41 փ., 3 տուն Հասցե՝ ք. Երևան, Կիևյան 16
Բանկային տվյալներ. Բանկային տվյալներ.
Բանկի անվանումը՝ Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ Բանկի անվանումը՝ էյչ-էս-Բի-Սի Բանկ
Հ/Հ 22000 0129372000 Հ/Հ 21700 001-149475-001
ՀՎՀՀ 00094779 ՀՎՀՀ 05504868
Տնօրեն՝ Կ. Բաբաջանյան Կառավարիչ՝ Լ. Սողոյան
Ստորագրություն Ստորագրություն»

Ուսումնասիրելով կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ պետք է այն հաստատել և կարճել գործի վարույթը՝ հետևյալ պատճառաբանությամբ.
Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի՝ կողմերը դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ:
«Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊԸ-ն և «Շանթ» ՍՊԸ-ի Երևանի մասնաճյուղը, հիմք ընդունելով նշված դրույթը, կնքել են հաշտության համաձայնություն:
Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ կողմերի ներկայացրած հաշտության համաձայնությունը չի հակասում օրենքին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, ինչը հիմք է Վերաքննիչ դատարանին արձանագրելու, որ ներկայացված հաշտության համաձայնությունը ենթակա է հաստատման:
Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Վերաքննիչ դատարանը, նախքան հաշտության համաձայնություն հաստատելը, կողմերին պարզաբանել է դրա դատավարական հետևանքները:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի

7-րդ կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե դատարանը հաստատել է կնքված հաշտության համաձայնությունը, իսկ նույն օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ, 220-րդ, 221-րդ, 2211-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊԸ-ի և «Շանթ» ՍՊԸ-ի Երևանի մասնաճյուղի միջև կնքված հաշտության համաձայնությունը հետևյալ բովանդակությամբ.

«ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան «26» մայիսի 2010թ.

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ «Դատարան») վարույթում է գտնվում թիվ ԵԱՔԴ/3185/02/09 քաղաքացիական գործն (այսուհետ՝ «Գործ») ըստ հայցի՝ «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊ ընկերության ընդդեմ «Շանթ» ՍՊ ընկերության Երևանի մասնաճյուղի.
«Սրթի Թու Փրոդաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 00094779, գրանցման համար՝ 264.110.07744, գրանցման օրը՝ 19.12.2006թ., վկայականի համար՝ 03Ա074259), հասցե՝ ք. Երևան, Արաբկիր, Արաբկիր 41-3) ի դեմս տնօրեն՝ Կարեն Բաբաջանյանի, որը գործում է համաձայն ընկերության կանոնադրության և ՀՀ օրենքների (այսուհետ նաև՝ Հայցվոր), մի կողմից, և
«Շանթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Երևանի մասնաճյուղը (ՀՎՀՀ՝ 05504868, պետական գրանցման վկայական՝ 01Ա 014796, պետական գրանցման համար՝ 29.110.00409, հասցե՝ ք. Երևան, Կիևյան 16), ի դեմս կառավարիչ Լ. Սողոյանի, որը գործում է համաձայն ընկերության կանոնադրության և ՀՀ օրենքների (այսուհետ նաև՝ Պատասխանող), մյուս կողմից, միասին նաև «Կողմեր»,
կնքեցին սույն հաշտության համաձայնությունը (այսուհետ՝ «Համաձայնություն») ստորև շարադրվածի մասին.
1. Համաձայնությամբ Կողմերը հաստատում են, որ 06.10.2008 թ.-ին Հայցվորի և Պատասխանողի միջև կնքված «32 ատամ հումորային հաղորդման պատրաստման և հեռարձակման» պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») շրջանակներում պատրաստված հաղորդումների նկատմամբ հեղինակային բոլոր իրավունքները, այդ թվում՝ բացառիկ գույքային, պատկանում են Հայցվորին:
2. Հայցվորը հրաժարվում է Պատասխանողին Գործի շրջանակներում ուղղված իր բոլոր պահանջներից, այդ թվում՝ գումարային:
3. Պատասխանողը պարտավորվում է առանց Հայցվորի թույլտվության չօգտագործել 06.10.2008թ. Պայմանագրի շրջանակներում ստեղծված «32 ատամ» հումորային հաղորդումները:
4. Գործով պետական տուրքի վճարումը կատարվում է Հայցվորի կողմից:
5. Սույն հաշտության համաձայնությունը հաստատող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից գործով կիրառված բոլոր արգելանքները համարվում են վերացված:
6. Համաձայնությունը կնքվել է Կողմերի կողմից կամավոր կերպով:

	7. Համաձայնությունը կազմված է երեք օրինակից: 8. Համաձայնությունը կնքելիս Կողմերը ծանոթ են ՀՀ քաղաքացիական դատավարության 33-րդ և 109-րդ հոդվածների պահանջներին, ինչպես նաև գիտակցում են հաշտության համաձայնության հաստատման և գործի վարույթի կարճման հետևանքները: 9. Սույնով Կողմերը դատարանից խնդրում են հաստատել Համաձայնությունը և թիվ ԵԱՔԴ/3185/02/09 քաղաքացիական գործի վարույթը կարճել: ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ Հայցվոր Պատասխանող «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊԸ «Շանթ» ՍՊԸ-ի Երևանի մասնաճյուղ Հասցե՝ ք. Երևան, Արաբկիր 41 փ., 3 տուն Հասցե՝ ք. Երևան, Կիևյան 16 Բանկային տվյալներ. Բանկային տվյալներ. Բանկի անվանումը՝ Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ Բանկի անվանումը՝ էյչ-էս-Բի-Սի Բանկ Հ/Հ 22000 0129372000 Հ/Հ 21700 001-149475-001 ՀՎՀՀ 00094779 ՀՎՀՀ 05504868 Տնօրեն՝ Կ. Բաբաջանյան Կառավարիչ՝ Լ. Սողոյան Ստորագրություն Ստորագրություն» 2. Բեկանել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 05.03.2010 թվականի թիվ ԵԱՔԴ/3185/02/09 քաղաքացիական գործով կայացված վճիռը և կարճել թիվ ԵԱՔԴ/3185/02/09 քաղաքացիական գործի վարույթը: 3. «Սրթի Թու Փրոդաքշն» ՍՊԸ-ից հօգուտ «Շանթ» ՍՊԸ-ի Երևանի մասնաճյուղի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերջինիս կողմից Վերաքննիչ դատարանում նախապես վճարված պետական տուրքի գումար: 4. Սույն որոշումն օրինական ուժի մեջ մտնելու պահից գործով կիրառված բոլոր արգելանքները համարել վերացված: 5. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և մինչև օրինական ուժի մեջ մտնելը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով: նախագահող դատավոր Տ.Նազարյան դատավոր Կ.Հակոբյան դատավոր Տ.Սահակյան Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտել « » _____ 2010 թվականին: Նախագահող դատավոր Տ. Նազարյան
Դատական ակտի ամսաթիվը:	03-06-2010
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ.:	20000 ՀՀ դրամ
Ամսաթիվ:	29-06-2010

Ամսաթիվ:	29-06-2010
էջերի քանակ:	140
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	03-08-2010
Ուր:	Արաբկիր Քանաքեռ-Զեյթուն
Գրության համարը:	
Այլ նշումներ:	

Փաստաթուղթը տպվել է www.datalex.am պորտալի կողմից 14 Հունիս 2011